ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 7-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԳՈՐԾԱԿԱՐԳԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

Մասնակցությամբ՝

- Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝ Արամ Հովհաննիսյանի
- Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Բարսեղ Նիկողոսյանի
- Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Երվանդ Խաչատրյանի
- Արմավիրի մարզպետի օգնական՝ Մանվել Մելիքյանի
- Արմավիրի մարզպետի օգնական՝ Նարեկ Խաչատրյանի
- Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների
- Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության
- հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ՝ Աննա Միքայելյանի
- Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ՝ Տաթևիկ Մկրտչյանի

Քննարկվեց՝

ՀՀ Արմավիրի մարզպետի գլխավորած 24.03.2025թ. գործակարգավարական խորհրդակցության ընթացքում մարզպետի կողմից տրված հանձնարարականների կատարման ընթացքը և մարզում առկա այլ հրատապ խնդիրներ:

1.1 ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեին ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից անշարժ գույքի հանձնման ուղղությամբ տարված աշխատանքների և արդյունքների վերաբերյալ, ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Դավիթ Ավետիսյանը զեկուցեց հետևյալ տեղեկատվությունը՝

ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեին ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից անշարժ գույքի հանձնման գործընթացի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեին չհանձնված թվով 7 դպրոցների հանձնման կապակցությամբ կատարվում է ամենօրյա աշխատանք /փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելություն դպրոց, քննարկումներ ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի աշխատակիցների հետ/ և արդյունքների մասին կազմվել է տեղեկանք, որը ներկայացվում է աղյուսակի տեսքով:

	Անշարժ գույքի անվանումը	**Անշարժ գույքի հասցեն**	**Պետական գույքի կառավարման կոմիտեին չհանձնելու պատճառները**	**Անշարժ գույքի հետ կապված խնդիրների լուծման վերաբերյալ տարվող աշխատանքները**
1	«Արմավիրի Մովսես Սիլիկյանի անվան N6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ ք.Արմավիր Շահումյան 20	Դպրոցի տարածքում առկա է շինություն, որը ներկա պահին չի տնօրինվում դպրոցի կողմից	Կատարվել է այց դպրոց, առաջարկվել է տարբերակ գույքի տնօրինումն ապահովելու համար:
2	«Արմավիրի N 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ ք.Արմավիր Աբովյան 182	Դպրոցի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում առկա են հողամասի և շինությունների վերաբերյալ անհամապատասխանություններ	**Փաստաթղթերը գրությամբ ներկայացվել են Պետական գույքի կառավարման կոմիտե:**
3	«Հացիկի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ,Արմավիր համայնք, գ. Հացիկ	Դպրոցի տարածքում առկա են շինություններ, որը ներկա պահին չի տնօրինվում դպրոցի կողմից	Կատարվել է այց դպրոց առաջարկվել է տարբերակ խնդրի լուծման վերաբերյալ:

		1-ին փ., 26շ.		
4	«Լեռնամերձի հիմնական դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ, Խոյ խոշորացված համայնք գ. Լեռնամերձ Արագածի 26	Տարածքում առկա է ինքնակամ շինություն	Աշխատանքներ են տարվում ինքնակամ շինության օրինականացման համար:
5	«Վարդանաշենի Մ.Մինասյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ գ.Վարդանաշեն 1-ին փողոց,24 շենք	Կատարվել է նոր չափագրություն,որից հետո իրականացվելու է սեփականության իրավունքի գրանցման գործընթաց	**ՈՒսումնասիրվել են ներկայացված փաստաթղթերը, կատարվել է այց դպրոց, միջոցներ են ձեռնարկվում խնդրի լուծման ուղղությամբ:**
6	Արգինայի միջնակարգ դպրոց	Գ. Արգինա, Աբովյան 40	Բացակայում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը:	**Պետական գույքի կառավարման կոմիտե ուղարկվել է մարզպետի համապատասխան գրություն կառավարության որոշման նախագիծ շրջանառելու համար:**
7	Գեղակերտի միջնակարգ դպրոց	ՀՀ Արմավիրի մարզ Խոյ խոշորացված համայնք Գեղակերտ բնակավայր Մ.Մաշտոցի 22	Հարակից շինությունների սեփականատերերի կողմից որոշակի տարածքի զավթում,ինքնակամ շինությունների կառուցում	Միջոցներ են ձեռնարկվում ինքնակամ շինությունների քանդման և հետևանքների վերացման կապակցությամբ:

1.2 Համայնքային սեփականություն հանդիսացող հողերի կադաստրային գնահատման կարգի և վաճառքների կասեցման, աճուրդների մեկնարկային գների սահմանման ընթացակարգի վերաբերյալ: ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Դավիթ Ավետիսյանը զեկուցեց նաև համայնքային սեփականություն հանդիսացող հողերի կադաստրային գնահատման կարգի և վաճառքների կասեցման, աճուրդների մեկնարկային գների սահմանման ընթացակարգի և մայիսի 3-ին կայանալիք համապետական շաբաթօրյակի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը՝

Համայնքային սեփականություն հանդիսացող հողերի կադաստրային գնահատման կարգի և վաճառքների կասեցման, աճուրդների մեկնարկային գների սահմանման ընթացակարգի վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմիններին գրությամբ տեղեկացվել է, որ անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել ՀՀ տարածքային կառավարման եվ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանի մոտ 2025 թվականի մարտի 27-ին կայացած միջգերատեսչական աշխատանքային խմբի խորհրդակցության N ԴԽ/01-2025 արձանագրությունը և բոլոր կետերի մասով ներկայացնել կարծիք՝ համապատասխան հիմնավորումներով:

Մայիսի 3-ին կայանալիք համապետական շաբաթօրյակի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմիններին գրությամբ տեղեկացվել է, որ անհրաժեշտ է 2025 թվականի ապրիլի 26-ին վարչական տարածքում կազմակերպել և իրականացնել աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ՝ որոնցում ակնկալվում է տեղական ինքնակառավարման մարմինների, ենթակա կազմակերպությունների և տնտեսվարող սուբյեկտների /անկախ սեփականության ձևից/ ակտիվ մասնակցությունը, սահմանված ժամկետում Արմավիրի մարզպետի աշխատակազմ ներկայացնել շաբաթօրյակի սխեման՝ կից ներկայացված ձևաչափին համապատասխան:

2. 2025թ. ընթացքում իրականացվելիք Սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանը զեկուցեց՝

2025թ. ընթացքում ՀՀ կառավարության 2 որոշումներով ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմին հատկացվել է 126,845.2 հազար դրամ՝ մարզի 3 համայնքի 4 բնակավայրում իրականացված սուբվենցիայի 4 ծրագրի/5 ենթածրագրի կառավարության մասնաբաժնի համաֆինանսավորման նպատակով:

Ծրագրերը ֆինանսավորվում են համայնքապետարանների կողմից ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ ներկայացված օրենսդրությամբ նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերի առկայության, դրանց ուսումնասիրության, ինչպես նաև համապատասխան աշխատակիցների կողմից կատարված աշխատանքների, կատարողականների համապատասխանելիության և կատարված աշխատանքների որակի մասով տեղերում իրականացված մշտադիտարկման արդյունքում:

Համայնքապետարանների կողմից ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ ներկայացված օրենսդրությամբ նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերը գտնվում են ուսումնասիրման փուլում, որից հետո ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության կողմից կկատարվեն որոշումներով հատկացված գումարների փոխանցումներ համապատասխան համայնքապետարաններ, աշխատանքներն ընթացքի մեջ են:

2025թ. ապրիլի 7-ի դրությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել 15 փաթեթ կառավարության մասնաբաժնի հատկացման համար՝ շուրջ 420.7 մլն դրամ ընդհանուր գումարով՝ 11 ծրագրի/15 ենթածրագրի համար, գումարները կհատկացվեն կառավարության առաջիկա նիստերի ընթացքում:

2025թ. ընթացքում սուբվենցիայի ծրագրերի շինարարական աշխատանքների իրականացման փուլ/մշտադիտարկում (01. 04. 2025թ. դրությամբ**)**

2022թ. հավանության արժանացած սուբվենցիոն ծրագրեր (41 ծրագիր 132 ենթածրագրով)

- ավարտված - 126 ենթածրագիր (2024թ.-ին՝ 14, 3-ի լրացուցիչ աշխ.)
- ավարտական փուլում -1 ենթածրագիր
- ընթացքի մեջ է - 4 ենթածրագիր /1-ը կիսատ է մնացել, չի իրականացվում/
- չսկսված - 1 ենթածրագիր /Լեռանգոգի ոռոգման սնուցող ջրագծի կառուցում, թողնվել է անհետևանք, կիրականացվի 2025թ. լրամշակումից հետո միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն ուղարկելուց հետո/

2023թ. հավանության արժանացած սուբվենցիոն ծրագրեր (30 ծրագիր 126 ենթածրագրով)

- ավարտված -95 ենթածրագիր (2024թ.-ին՝ 37)
- ավարտական փուլում -3 ենթածրագիր
- ընթացքի մեջ է - 9 ենթածրագիր
- չսկսված - 19 ենթածրագիր
  չեղարկված - 17 (23.07.2024թ. Մեծամոր համայնքի կողմից թվով 10 ենթածրագիր չեղարկվել է, չեղարկվել է նաև Փարաքարի 7 մանկապարտեզների հիմնանորոգման ծրագիրը)

2024թ. հավանության արժանացած սուբվենցիոն ծրագրերից (31 ծրագիր 105 ենթածրագրով, ևս 6-ը 2025թ.-ին)

- ավարտված - 26 ենթածրագիր (2024թ.-ին՝ 11, 2025թ.-ին՝ 15)
- ավարտական փուլում -14 ենթածրագիր
- սկսված և ընթացքի մեջ գտնվող- 21 ենթածրագիր /1-ի աշխ. դադարեցվել են/
- չսկսված -44 ենթածրագիր

  որից՝

չսկսված սուբվենցիայի ծրագրերը մեծամասամբ գտնվում են մրցութային կամ պայմանագրերի կնքման փուլերում:

<u>2025թ. սուբվենցիայի ծրագրեր</u>

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել 2025թ. սուբվենցիոն ծրագրերի 16 ամբողջական փաթեթ, 87 ենթածրագրերով՝ 7.5 մլրդ դրամ ընդհանուր արժեքով:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն լրացուցիչ ներկայացվել է Արաքս համայնքից 7 ամբողջական փաթեթ, 32 ենթածրագրերով՝ 1.95 մլրդ դրամ ընդհանուր արժեքով:

2025թ. սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ ոլորտային գերատեսչությունների կարծիքները և դիտողությունները մարզպետի համապատասխան շրջաբերական գրություններով ուղարկվել են համայնքների ղեկավարներին և առաջարկվել հնարավորինս սեղմ ժամկետում ներկայացնել լրամշակված փաստաթղթերը: Կատարված աշխատանքի արդյունքում ՀՀ ՏԿԵՆ են ներկայացնել 15 ծրագրի լրամշակված փաստաթղթեր, աշխատանքները շարունակվում են:

ՀՀ վարչապետի 2019 թվականի մարտի 19-ի թիվ 278-Ա որոշմամբ հաստատված ՀՀ պետական տարեկան բյուջեներով նախատեսված սուբվենցիաներից բացի ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի 12.03.2025թ. կայացած նիստի ընթացքում պայմանով հավանության է արժանացել Արմավիր համայնքի 2 ծրագիր և հետաձգվել է 1 ծրագրի հարցի քննարկումը՝ Մեծամոր համայնքի շենքերի տանիքների վերանորոգման ծրագրի:

3. Մեծամոր համայնքի իրավական հսկողության կազմակերպման աշխատանքների վերաբերյալ, ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ՝ Գոռ Հովհաննիսյանը և ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ՝ Լիաննա Հարությունյանը զեկուցեցին՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի նոյեմբերի 29-ի N2881-Ա հրամանով հաստատված տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2025 թվականի աշխատանքային ծրագրի համաձայն, ՀՀ Արմավիրի մարզպետի 2025 թվականի մարտի 25-ի ՈՄՈ/432-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքում 2025 թվականի առաջին եռամսյակում իրականացվել է իրավական հսկողություն, որի արդյունքում 2025 թվականի ապրիլի 2-ին կազմվել են համապատասխան փաստաթղթեր՝ արձանագրություն և լրացված հարցաշար:

Աշխատանքային խմբերի կողմից իրավական հսկողությունն իրականացվել է «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով:

Մասնավորեցնելով իրավական հսկողության արդյունքում կազմված հարցաշարով արձանագրված թերությունները (ըստ բնագավառների)՝ առաջիկայում այն կներկայացվի Մեծամոր համայնքի ղեկավարին, իսկ մեկամսյա ժամկետում՝ նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Աշխատանքային խմբի կողմից ցուցաբերվել է համապատասխան մեթոդական աջակցության, որը դրական է անդրադարձել որոշակի ոլորտային աշխատանքների համակարգված գործունեության վրա:

4. Արմավիրի մարզի, Արմավիր համայնքի Լենուղի բնակավայրի 4-րդ փողոցի 1 և 3 բազմաբնակարան վթարային շենքերի բնակարաններում փաստացի բնակվող բնակիչներին բնակարանային պայմանների բարելավման նպատակով ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանը զեկուցեց՝

ՀՀ կառավարության կողմից ընդունվել և գործողության մեջ է դրվել N 340-Ն որոշումը, համաձայն որի Արմավիր համայնքի Լենուղի բնակավայրում գտնվող N1 և N3 բազմաբնակարան շենքի բնակիչների բնակության պայմանների բարելավման նպատակով մարզպետի աշխատակազմին հատկացվել է 182.500.0 ՀՀ դրամ բնակելի տուն ձեռք բերելու կամ անհատական տուն կառուցելու նպատակով ֆինանսական աջակցություն: Որոշմամբ սահմանվել է որ ֆինանսական աջակցության տրամադրման համար մարզպետի և շահառուների միջև օրենսդրությամբ սահմանված կարգով վկայագրի միջոցով հիշատակված նպատակների համար պետք է կնքվի և նոտարական կարգով վավերացվի պայմանագիր, սակայն մինչ այդ Որոշմամբ նախատեսված է իրականացնել փուլային հաջորդաբար գործողություններ, որը վերապահված է մարզպետի աշխատակազմին: Այդ համատեքստում հաշվի առնելով այն հանգամանքը որ որոշումն ուժի մեջ մտնելուց 20 օրյա ժամկետում շահառուները պետք է ծանուցվեն գործընթացի իրականացման համար, ուստի առաջարկվում է հանդիպում կազմակերպել շահառուների հետ, իրականացնել բացատրական աշխատանքներ՝ իրենց կողմից իրականացվելիք աշխատանքների մասին: Այս պահի դրությամբ Արմավիրի համայնքապետարանից ստացվել է շահառուների ցուցակը, որի հիման վրա պետք է նախապատրաստվեն շահառուներին տրամադրվող Ծանուցագրերը: Նշված աշխատանքներն իրականացնելու նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ:

5. Մարզային ենթակայության բժշկական կազմակերպությունների որակի գնահատման հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ասթինե Ապիտոնյանը զեկուցեց՝

Համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 02-ի N 1413-Ն որոշման պահանջների՝ ՀՀ ԱՆ 29.11.2024թ. թիվ 6918-Լ հրամանով ստեղծվել է լաբորատորիաներում որակի կառավարման համակարգի ներդրման համապատասխանությունը գնահատելու նպատակով աշխատանքային խումբ:

Աշխատանքային խմբի միջոցով ս/թ ապրիլի 21–ին նախատեսվում է իրականացնել Զարիշատ/Արամ/ Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրիր ԲԿ ՓԲ և Քեվորք և Անիթա Փակումեանների հիշատակի Հիսուսի մանուկներ ԱԿ ՓԲ և 22–ին Էջմիածնի ԲԿ և Մեծամորի ԲԿ ՓԲ ընկերությունների լաբորատորիաների որակի գնահատման գործընթաց:

6. «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության» ծրագրի և հակակարկտային կայանների ապակոնսերվացման աշխատանքների վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը զեկուցեց՝

Ինչպես նախատեսված էր մարտի 27-ին կայացել է գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի պետական աջակցության ծրագրի վերաբերյալ քննքրկում, որին մասնակցել են ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակիցները և համայնքների գյուղատնտեսական ոլորտի պատասխանատուները: Նախարարության կողմից ներկայացվել են ծրագրային պահանջներ, մեր կողմից ներկայացվել են առաջարկներ:

Մարզում ցրտահարության վտանգ չի նախատեսվում, բոլոր ծառերը փոշոտվել են և եթե կարկտահարության անսպասելի դեպքեր չգրանցվի՝ սպասվում է բերքառատ տարի:

Քննարկման ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց քննարկելու հակակարկտային կայանների ապակոնսերվացման աշխատանքների վիճակի վերաբերյալ: Աշխատանքները շարունակվում են, 3 համայնքներում/Արմավիր, Փարաքար և Խոյ/ հակակարկտային կայաններն արդեն պատրաստ են, իսկ Մեծամոր և Բաղրամյան համայնքներում առաջիկայում կավարտվեն կոնսերվացման աշխատանքները:

7. **ՀՀ Արմավիրի մարզպետի՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների այցերի և դպրոցների մշտադիտարկման աշխատանքային խմբի ընթացիկ աշխատանքների վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական Մանվել Մելիքյանը և ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Սոնյա Բուդաղյանը զեկուցեցին՝**

ՀՀ Արմավիրի մարզպետի 2025 թվականի փետրվարի 21-ի ՆՄՈ/272-Ա որոշմամբ կրթության բնագավառում տիրող իրավիճակի վերաբերյալ մշտադիտարկում իրականացնելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի կողմից ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) ոլորտային պատասխանատուների մասնակցությամբ շրջայց է կատարվել Աշխատակազմի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններ, մասնավորապես՝ 2025 թվականի ապրիլի 2-ին «Հովտամեջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, իսկ ապրիլի 3-ին՝ «Հայթաղի Հ. Կարապետյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ:

Շրջայցերի նպատակն է վերլուծել և գնահատել դպրոցների ինչպես ուսումնական, այնպես էլ վարչատնտեսական մասերի իրավիճակը, իսկ հայտնաբերված թերությունների պարագայում՝ նաև դրանց լուծման տարբերակները:

«Հովտամեջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ՝

<u>Ուսումնական մասով՝</u>

Խախտելով հանրակրթության պետական չափորոշչի պահանջը՝ դպրոցում դասաժամերը 40 րոպե տևողությամբ էին, որի պատճառով այցի պահին մի շարք դասարաններ արդեն ավարտել էին դասապրոցեսը:

Իրականացվել է 1-12-րդ դասարանների սովորողների հաշվառում (ներկա-բացակա), որի արդյունքում պարզվեց, որ 12-րդ դասարանի աշակերտները բացակայում էին դպրոցից, մինչդեռ՝ չորեքշաբթի օրվա դասացուցակով 12-րդ դասարանին նախատեսված էր 6 դասաժամ:

Դպրոցի կանոնադրությամբ սահմանված ժամկետներում ինչպես մանկավարժական խորհրդի, այնպես էլ մեթոդմավորման նիստեր չեն գումարվել (ըստ մանկավարժների բանավոր խոսքի), մինչդեռ՝ առկա էին դրանց արձանագրությունները:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ՝

«Հովտամեջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Ա. Սահակյանին հանձնարարականներ տրվեցին առկա խնդիրները վերացնելու վերաբերյալ:

Վարչական մասով՝

Ստուգվել է դպրոցի սանիտարահիգիենիկ պայմանները՝ ընդհանուր մաքրություն, սանհանգույցների վիճակ, ճաշարանի ստուգում, որի արդյունքում դպրոցի ընդհանուր մաքրությունը գնահատվում է բավարար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

Հովտամեջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում տիրում էր ոչ բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտ և ուսումնական գործընթացը խաթարված էր:

ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական Մ. Մելիքյանի, ինչպես նաև Աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ս. Բուդաղյանի կողմից առանձին հանդիպում և քննարկում իրականացվեց «Հովտամեջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Ա. Սահակյանի և նախկին տնօրեն,այժմ հավակնորդ և հաստատության ուսուցիչ Լ. Նավասարդյանի հետ, ինչպես նաև դպրոցի աշխատակազմի և ծնողական խորհրդի ներկայացուցիչների հետ:

ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից, հաջորդ գործակարգավարական խորհրդակցությանը զեկուցելու պահանջով, մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարներին տրվեցին հետևյալ հանձնարարականները՝

1. **Գոռ Հովհաննիսյան՝**

Զեկուցել մայիսի 3-ին կայանալիք համապետական շաբաթօրյակի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

2. Ասթինե Ապիտոնյան՝

Զեկուցել՝ ինչ փուլում է բժշկական կենտրոնների նախարարությանը հանձնելու փաթեթները և գույքագրել առկա խնդիրները:

3. Մանվել Մելիքյան, Սոնյա Բուդաղյան՝

Զեկուցել՝
1.1 Արտադպրոցական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժների կամավոր ատեստավորման վերաբերյալ:
1.2 Ստուգայց իրականացրած դպրոցներից որը ինչ ծրագրի մեջ է ընդգրկված/ եթե այդպիսիք կան/:
1.3 Մարզում իրականացվող պետական աջակցման ինչպիսի ծրագրեր կան, որ ոլորտներն են ընդգրկում/ այդ թվում ԼՂ տեղահանվածներին վերաբերելի/ դրանց ընթացքի վերաբերյալ:

4. Լիլիթ Մուշեղյան՝

Ներկայացնել ժամկետանց սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն

Ամփոփելով քննարկումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյանը խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

2025-04-21 14:09:41 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

Արձանագրող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի անձնակազմի կառավարման,
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության
հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության
բաժնի պետ՝ Աննա Միքայելյան